# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մեդէքսպերտ-Ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | Երկակի էներգիայի վիրաբուժական հարթակ՝ RF և ուլտրաձայնային | Surgnova, VariCure | Surgnova | Surgnova Healthcare Technologies (Zhejiang) Co., Ltd. | Մեկ ինտեգրված հարթակ, որն ապահովում է առաջադեմ բիպոլյար/RF անոթային փակման և ուլտրաձայնային կտրման-կոագուլյացիայի գործառույթներ: Երկու գործիքները կարող են միացված մնալ առանձին պորտերին, իսկ ակտիվացումը կատարվում է արտադրողի կողմից թույլատրված անվտանգ կարգով: Հյուսվածքային հետադարձ կապի հիման վրա էներգիայի ավտոմատ կարգավորում: RF գործիքով՝ մինչև 7 մմ ներառյալ անոթների փակման արտադրողի ցուցում, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ուլտրաձայնային գործիքով՝ մինչև 7 մմ: Սնուցումը՝ 100–240 VAC, 50/60 Hz: Ինքնաստուգում, սխալի/վտանգի տեսանելի և լսելի ազդանշաններ, օգտագործողին հասկանալի կառավարման միջերես: Մատակարարումը ներառում է առնվազն 1 բազմակի օգտագործման ուլտրաձայնային տրանսդյուսեր, անհրաժեշտ ոտնակ(ներ), մալուխներ, ադապտերներ, ծրագրային լիցենզիաներ, տեղադրում, ֆունկցիոնալ փորձարկում և ուսուցում՝ առանց առանձին վճարի: Տրանսդյուսերը առանձին գնման ենթակա չէ: Երաշխիք՝ 24 ամիս: IEC 60601-1, IEC 60601-1-2 և IEC 60601-2-2 ստանդարտների համապատասխանության ապացույց: 5-01 էներգետիկ հարթակն ունի IEC 60601-1:2005+A1:2012+A2:2020, IEC 60601-1-2:2014+A1:2020 և IEC 60601-2-2:2017+A1:2023 (ներառյալ կիրառելի մեկնաբանությունները) անվտանգության և էական կատարողականի ապացույց: Ստերիլ, մեկ պացիենտի համար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նախատեսված, 5 մմ անվանական տրամագծով RF/բիպոլյար անոթային փակման գործիքներ՝ բաց և էնդոսկոպիկ կիրառման համար։ Աշխատանքային երկարությունների տեսականին՝ 230, 370 և 440 մմ կարճ/ստանդարտ/երկար տարբերակներով։ Ներկառուցված մեխանիկական դանակ, հյուսվածքային հետադարձ կապով կառավարվող էներգիա և մինչև 7 մմ ներառյալ անոթների փակման արտադրողի հաստատված ցուցում։ Լիարժեք համատեղելիություն առաջարկվող 5-01 հարթակի հետ։ Չափերի համամասնությունը՝ պատվիրատուի հայտով։ Ներկայացված է IFU/5-01 համակարգի համատեղելիության փաստաթուղթ։ Ստերիլիզացման ենթակա չեն նշված գործիքները, քանի որ մեկանգամյա օգտագործման համար են նախատեսված։ Ստերիլ, մեկ պացիենտի համար նախատեսված ուլտրաձայնային մկրատներ՝ փափուկ հյուսվածքների բռնման, դիսեկցիայի, կտրման և կոագուլյացիայի համար։ Լիսեռի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տրամագիծը` 5.5 մմ: Աշխատանքային երկարությունների տեսականին` 90, 130, 170, 210, 350, 430 մմ կարճ/ստանդարտ/երկար տարբերակներով: Ձեռքի և/կամ ոտնակի կառավարում, 7 մմ անոթների փակման արտադրողի հաստատված ցուցում` հաստատված արտադրողի IFU-ով: Լիարժեք համատեղելիություն առաջարկվող 5-01 հարթակի և տրանսդյուսերի հետ: Չափերի համամասնությունը` պատվիրատուի հայտով: Ներկայացված է IFU/5-01 համակարգի համատեղելիության փաստաթուղթ: Ստերիլիզացման ենթակա չեն ուլտրաձայնային մկրատները, քանի որ մեկանգամյա օգտագործման համար են նախատեսված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Медэксперт в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | |